

**ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Սևրի պայմանագրի և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի մասին\*

**Բանալի բառեր** – Հայկական հարց, Սևրի պայմանագիր, Վ. Վիլսոնի իրավարար վճիռ, Արևմտյան Հայաստան, Միացյալ Հայաստան, Փարիզի խաղաղության վեհաժողով, Խորհրդային Ռուսաստան:

2020 թ. վերջերին լույս է տեսել Հայկական հարցի և Հայոց պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների համար նախատեսված «Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը. քննական հայացք 100-ամյա հեռավորությունից»<sup>1</sup> կոլեկտիվ աշխատությունը, որը հեղինակել են հանրապետության տարբեր գիտակրթական հաստատություններ ներկայացնող պատմաբաններ:

Հեղինակները 100-ամյա հեռավորությունից համակողմանիորեն դիտարկել ու վերլուծել են Հայաստանի ու հայության համար ուղենշային նշանակություն ունեցող Սևրի պայմանագրի ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռի ինչպես նախապատմությունն ու ձևավորման գործընթացը, այնպես էլ անցած հարյուրամյակում այդ փաստաթղթերը կյանքի կոչելուն ուղղված ջանքերը: Ավելին, առաջնորդվելով քննական պատմագիտության լավագույն ավանդույթներով՝ աշխատության հեղինակները նոր հայացք են նետել 100-ամյա վաղեմության իրադարձություններին՝ անցյալի ու ներկայի խորքային կապն ու փոխկապակցվածությունը բացահայտելու նպատակով:

Դրվատելի է, որ պատմագետների հեղինակային խումբը չի բավարարվել փաստերի վերաշարադրմամբ, այլ պատմական իրադարձությունների հետնախորքում բացահայտել է այնպիսի թաքնված օրինաչափություններ, որոնց խորքային ընկալումը խիստ անհրաժեշտ է նաև մեր օրերում: Քայլ առ քայլ, աստիճան առ աստիճան հեղինակները ներկայացնում են Հայկական հարցի ձևավորման պատմությունն ու նրա անցած բարդ ուղին: Նրանք ցույց են տալիս, որ Հայկական հարցի առանցքում Արևմտ-

\*Ընդունվել է տպագրության 18. 02.2021:

1 Տես **ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՆ ՈՒ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՐՈՒ**. քննական հայացք 100-ամյա հեռավորությունից, հեղ. **Ա. Ց. Մարության, Ս. Ա. Պողոսյան, Ա. Մ. Հակոբյան** և ուրիշներ, խմբ. **Գ. Ա. Խաղիմյան**, Եր., «Լուսակն» հրատ., 2020, 252 էջ: Այսուհետև գրայտավոր գրքից մեջբերումները կնշվեն տեքստում:

*Վե՛ր համահայկական հանրեւս, ԺԳ (ԺԹ) ցարի, թիվ 1 (73), հունվար-մարտ, 2021*

յան Հայաստանի՝ որպես ապագա հայկական պետության իրավական կարգավիճակի ու տարածքային-աշխարհագրական ընդգրկման վերաբերյալ միջազգային դիվանագիտության պատկերացումներն էին: Ուստի 1878-1920 թթ. առաջադրված Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման պահանջները հայ ժողովրդի իրավունքների ճանաչման այն վկայագրերն էին, որոնց հիման վրա հետագայում մշակվեցին Արևմտյան Հայաստանը Հայաստանի Հանրապետությանը միավորելու քայլերը:

Աշխատության առաջին գլխում հեղինակները համառոտ ակնարկով ներկայացնում են Հայկական հարցի անցած բարդ ճանապարհը և իրավա-ցիորեն նկատում են, որ եվրոպական տերությունները նրան անդրադառնում էին միայն սեփական տնտեսական ու քաղաքական արտոնություններն ապահովելու և Ռուսաստանի միջամտությունն ու հայկական նահանգների գրավումը կանխելու նպատակով: Իսկ Ռուսաստանը դեմ էր Հայաստանի ինքնավարությանը, քանի որ դրանով կարող էր փակվել դեպի հարավ նվաճումների ճանապարհը, մինչդեռ արևմտահայերի ծանր վիճակը միշտ կարող էր հնարավորություն ընձեռել Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար:

Աշխատության հեղինակները, նորովի քննության ենթարկելով Հայկական հարցի բովանդակությունը, իրավացիորեն նշում են, որ մինչև 1917 թվականը միջազգային դիվանագիտության կողմից այն բարձրացվել է առավելագույնը ինքնավարության պահանջի տեսքով (էջ 33): Ավելին, անգամ 1918 թ. սկզբին հայ քաղաքական վերնախավը դեռևս պատրաստ չէր ընդունելու անկախության գաղափարը, և դրանով էր պայմանավորված այն իրողությունը, որ հայ գործիչներն ինքնուրույն գործելու փոխարեն սկսեցին վրացիների և թաթարների հետ համագործակցության ուղիներ փնտրել: Հեղինակների կարծիքով՝ Առաջին համաշխարհային պատերազմի վերջնամասում բարենպաստ էր նաև միջազգային կացությունը, և Փարիզի Խաղաղության վեհաժողովի սկսվելուց հետո Միացյալ Հայաստանի գաղափարը ոչ մի հակառակորդ չունեի մեծ տերությունների շրջանում, իսկ տարակարծությունները միայն հայկական պետության հովանավորի ընտրության հարցի շուրջ էին:

Աշխատության հեղինակները մանրամասն քննարկում են նաև ՀՀ և Ազգային պատվիրակությունների հարաբերությունների խնդիրը: Մերժելով վերջիններիս միջև եղած անզիջում պայքարի մասին տարածված թյուր տեսակետը՝ նրանք իրավացիորեն նշում են, որ երկկողմանի զիջումների գնալով Ավ. Ահարոնյանն ու Պ. Նուբարը գործեցին ի շահ Հայկական հարցի և հայ ժողովրդի: Նորահայտ արխիվային վավերագրերի հենքով հեղինակներն ապացուցում են, որ Սան Ռեմոյի կոնֆերանսը Սևրի պայմանագրի և Վ. Վիլսոնի իրավարար վճռի քաղաքական մեկնակետն էր, այ-

սինքն՝ ԱՄՆ նախագահի իրավարարությունը մեկնարկել է Սևրի պայմանագրի ստորագրումից դեռ ամիսներ առաջ, հետևաբար «դա միջազգային-իրավական միանգամայն ինքնուրույն գործընթաց էր» (էջ 46): Ուստի հեղինակները եզրակացնում են, որ Հայկական հարցի չորս տասնամյակ տևած քննարկումների ընթացքում հայ հասարակական-քաղաքական միտքը ձգտել է միասնական Հայաստանի ստեղծմանը, որի կազմում պետք է ներառվեին Արևելյան ու Արևմտյան Հայաստանները և Կիլիկիան: Այդ պատճառով Սևրի պայմանագրի վավերացված չլինելու և այդպես էլ առկա մնալու իրողությունից ամենևին էլ չի բխում, որ դրանում ամրագրված հայության իրավունքները կորցրել են իրենց ուժը: Սակայն անհիմն է նաև այն տեսակետը, թե Սևրի պայմանագիրն ու Վ.Վիլսոնի իրավարար վճիռը Մեծ Հայաստանի ստեղծման հայկական առավելապաշտական ծրագրերի մարմնացումն էին, քանի որ դրանցով պատմական Մեծ Հայքի տարածքն իրականում բաժանվում էր երեք՝ հայկական, թուրքական ու քրդական մասերի:

Հեղինակները փաստարկված հերքում են Սևրի պայմանագիրն իբր Լոզանի պայմանագրով փոխարինվելու մասին կեղծիքը և մանրամասն ներկայացնում Սևր-Լոզան անցման իրական բովանդակությունը: Շեշտվում է, որ միջազգային իրավունքի տեսանկյունից Լոզանի պայմանագրով հայոց իրավունքները ոչ միայն չեն չեղարկվել, այլև պայմանագրի 16-րդ հոդվածով դրանք փաստորեն վերահաստատվել են (էջ 156): Միևնույն ժամանակ Լոզանի պայմանագիրը չի ձանաչել թուրքական ինքնիշխանությունը Վ. Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքների վրա: Վիլսոնի իրավարար վճռի լեգիտիմությունը և այդ վճռի իրավական տեսակետից անխոցելի և անժամանցելի լինելու հանգամանքները հիմնավորվում են ամերիկյան գաղտնագրերով արխիվային փաստաթղթերով:

Սևրի պայմանագրի 100-ամյա իրողության լույսի ներքո նրա բովանդակության ամբողջական քննությունը միանգամայն դրվատելի նորություն է: Անդրադառնալով Սևրի պայմանագրի քաղաքական բովանդակությանը և նշելով, որ դրանով եզրափակվեց Առաջին աշխարհամարտում հաղթանակած և պարտված երկրների փոխադարձ պայմանագրերի երկար շարքը, հեղինակներն ընդգծում են, որ պայմանագրի 89-93-րդ հոդվածներով վերականգնվում էր հայ ժողովրդի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ անժամանցելի իրավունքը: Շեշտվում է, որ ոչ պակաս կարևոր էր ՀՀ դեյուրե ձանաչումը ոչ միայն աշխարհամարտում հաղթանակած դաշնակիցների, այլև պարտված Օսմանյան կայսրության կողմից: Դրանով իրավական առումով ամրագրվում էր, որ ՀՀ-ն Հայաստանի երկու մասերը միավորող Միացյալ Հայաստանն է (էջ 51):

Հայտնի իրողություն է, որ Սևրի հարյուրամյա պայմանագիրը կարևոր է ոչ միայն հայերի, այլև քրդերի համար, քանի որ Փարիզի խաղաղության վեհաժողովն առաջին լուրջ քաղաքական հարթակն էր, որտեղ բարձրացվեց քրդական հարցը, և Սևրի պայմանագրով մասնակիորեն ճանաչվեց քուրդ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Աշխատությունում նոր լույսի ներքո են ներկայացվում հայ-քրդական հարաբերությունները և հատկապես ապագա քրդական պետության սահմանների հստակեցման հիմնախնդիրը: Ընդգծվում է, որ թեև քրդերի պահանջներն արտաքուստ ուղղված էին Օսմանյան կայսրությանը, բայց «փաստորեն դրանք հակադրվում էին հայկական շահերին» (էջ 162): Ուստի հեղինակները եզրակացնում են, որ միակ խելամիտ ելքը հայ-քրդական հարաբերությունների բոլոր հիմնախնդիրները Սևրի պայմանագրի շրջանակներում կարգավորելն է:

Աշխատության մի ամբողջ գլուխ նվիրված է Խորհրդային Ռուսաստանի կողմից Սևրի պայմանագրի տապալմանն ուղղված հետևողական ջանքերի ներկայացմանը՝ սկսած 1920 թ. օգոստոսի 24-ի Մոսկվայի ռուս-թուրքական «բարեկամության» նախնական պայմանագրից մինչև 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը: Իրողությունն այն է, որ թե՛ 1920-ականներին, թե՛ մեր օրերում ՀՀ-ն այդպես էլ չկարողացավ խաղալ այն դիվանագիտական «խաղը», որը բավականին «հաջող իրականացրին Թուրքիան և Ադրբեջանը՝ հավատացնելով Ռուսաստանին իրենց նվիրվածությունը» (էջ 139):

Աշխատության վերջին՝ վեցերորդ գլխում Սևրի պայմանագիրը քննարկվում է որպես հայոց պահանջատիրության կարևոր հենասյուներից մեկը: Այն համարվում է ոչ միայն բարոյական, այլև իրավական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ: Ուստի հեղինակները շեշտում են, որ Հայաստանի Հանրապետությունը, չնայած իր կարճատև կյանքին, իրականացրել է հայ ժողովրդի ազատագրական պայքարի նպատակակետի հստակեցումը, որն ամրագրվել է Սևրի պայմանագրով:

Բավականին մանրակրկիտ անդրադարձ կա Սևրի պայմանագրի հանդեպ 1920-1930-ական թթ. Սփյուռքում գործող կազմակերպությունների վերաբերմունքին: Հիմնականում ձիշտ մեկնաբանելով դրանք՝ հեղինակները վիճելի տեսակետներ են արտահայտել Ռամկավար-ազատական կուսակցության (ՌԱԿ) գաղափարների վերաբերյալ: Կասկածից դուրս է, որ տվյալ շրջանում հավատարիմ մնալով խորհրդային կողմնորոշմանը՝ նրանք ԽՍՀՄ-ի վարած արտաքին քաղաքականությունը դրական էին գնահատում, իսկ դրանից յուրաքանչյուր շեղում՝ վտանգավոր հայ ժողովրդի համար (էջ 200): ՌԱԿ-ն անթաքույց հայտարարում էր, որ ԽՍՀՄ կազմում լինելը Հայաստանի անվտանգության միակ երաշխիքն է աշխարհի վերաբաժանման համար միմյանց հոշոտել պատրաստվող մեծ տերությունների մրցավազքի պայմաններում: Ուստի ՌԱԿ-ը տվյալ ժամանակաշրջանի հա-

մար իրատեսական չէր համարում Սևրի պայմանագրի ու Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի առաջադրումը և իր այդ մոտեցումը հիմնավորում էր Հայաստանի ժողովրդի անվտանգության վերաբերյալ ունեցած մտահոգություններով:

Ինչ վերաբերում է հնչակյաններին, ապա հեղինակների կարծիքով՝ Հայաստանի կարգավիճակի խնդիրը նրանք դիտարկում էին համաշխարհային հեղափոխություն երազանքի խորապատկերում: Նրանք ևս գտնում էին, որ Խորհրդային Ռուսաստանի հետ դաշինք կազմելը ոչ միայն աղետ չէ, այլև «ապահովութեան եւ փրկութեան երաշխիք է» (էջ 205): Ի տարբերություն ՌԱԿ-ի և ՍԴՀԿ-ի՝ ՀՅԴ-ն ամեն ինչ անում էր Սևրի պայմանագիրը սփյուռքահայության քաղաքական օրակարգի առաջին կետում պահելու համար, որը պատմական անհրաժեշտություն էր հայկական անկախ պետականության վերականգնման ճանապարհին և սփյուռքահայությանը համախմբելու ու հայապահպանությանը նպաստելու կարևոր գործոն:

Անկասկած, Սևրի պայմանագիրը և Վ. Վիլսոնի իրավարար վճիռը հայոց նոր պատմության կարևորագույն փաստաթղթերն են, որոնք կարող են նպաստել Հայկական հարցի արդարացի լուծմանը՝ հայ ժողովրդին տրամադրելով նրա ազգային համախմբման համար բավարար տարածք: Ափսոս միայն, որ Երկրորդ աշխարհամարտից հետո թափ հավաքած «սառը պատերազմը» թույլ չտվեց ԽՍՀՄ-ի կողմից նախագծված լուծումների իրականացմանը: Սակայն Հայաստանի վերանկախացումից հետո դեռևս որոշակի իրավական ու քաղաքական հնարավորություններ կան Սևրի հիմնադրություններն իրականացնելու համար:

Գրախոսվող աշխատության անուրանալի ձեռքբերումներն են՝ Առաջաբանն ու Վերջաբանը: Դրանց հեղինակը իրավացիորեն նշում է, որ ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ հետխորհրդային ժամանակներում մեր տարածաշրջանում դեռևս գործում է ոչ թե միջազգային իրավունքի ուժը, այլ մայրցամաքային կայսրությունների կողմից պարտադրվող ուժի իրավունքը: Հեղինակի կարծիքով՝ ժամանակին ՀՀ-ն չունեի իր իրավունքի ուժը ուժի իրավունքի վերածելու իրական հնարավորություններ, այնինչ 1991 թ. վերանկախացումը ստեղծեց նման խնդրի լուծման բոլոր անհրաժեշտ նախապայմանները: Որոշակի վերապահումներով վերաբերվելով «բոլոր նախապայմաններին»՝ նշենք, որ հատկապես 44-օրյա պատերազմի, նոյեմբերի 9-ի Հայտարարության ու դրանց հաջորդող ոչ ցանկալի զարգացումների համապատկերում անչափ կարևոր է դառնում, թե ո՞ր չափով մեզ կհաջողվի պահպանել Հայաստանի արտաքին ու մանավանդ ներքին անկախությունը: Մի բան, որը հնարավոր կլինի բացառապես գիտական նվաճումների վրա հիմնվող նոր տեխնոլոգիաներով զինված բա-

նակի և ազգի աննախադեպ համախմբման միջոցով, իհարկե, իրավունքի ուժը ուժի իրավունքի հետ զուգորդելու ճանապարհով:

**Ամփոփելով** նշենք, որ ընթերցողի դատին է ներկայացվել ամբողջական աշխատություն, որը, չնայած հեղինակների մեծ խմբին, ունի բավականին կոռ կառուցվածք, «հին» հիմնախնդիրների մասին թարմ ու հարուստ ասելիք և միանգամայն իրատեսական եզրահանգումներ: Ուստի արժանին մատուցելով «Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը. քննական հայացք 100-ամյա հեռավորությունից» կոլեկտիվ աշխատության հեղինակներին՝ որպես ընթերցող ու պատմաբան՝ շնորհավորում ենք այսպիսի բարձրարժեք ուսումնասիրություն պարզևեղու համար:

**Սուրեն Թ. Սարգսյան**

*Պատմ. գիտ. դոկտոր*

Summary

### **A HIGH-VALUE STUDY**

On the Treaty of Sèvres and the Arbitral Award of US President W. Wilson

Suren T. Sargsyan

*Doctor of Sciences in History*

**Key words** - Armenian Issue, Treaty of Sèvres, W. Wilson's Arbitral Award, Western Armenia, United Armenia, Paris Peace Conference, Soviet Russia.

At the end of 2020, a collective work for readers interested in the Armenian Question and the Armenian Cause - "The Treaty of Sèvres and the Arbitral Award of US President W. Wilson: A critical look from a 100-year distance" authored by historians representing various scientific and educational institutions of the republic was published.

The authors, both by means of examining their prehistory and history and by elucidating the efforts made to implement these documents over the past centenary, have comprehensively observed and analyzed the Treaty of Sèvres and the Arbitral Award of US President W. Wilson, which are landmarks for Armenia and the Armenians from a distance of 100 years. Moreover, guided by the best traditions of investigative historiography, they have taken a fresh look at 100-year-old events to reveal the deep connection and reciprocity between the past and the present.

Referring to the political content of the Treaty of Sèvres and noting that it concluded a long series of reciprocal treaties between the countries that won and lost in World War I, the authors emphasize that Articles 89-93 of the Treaty restored the timeless right of the Armenian people to Western Armenia. It is emphasized that the de jure recognition of the Republic of Armenia was no less important not only by the allies who won World War I, but also by the defeated Ottoman Empire. It legally

stated that the Republic of Armenia was the United Armenia, which united the two parts of Armenia.

The authors substantiatedly deny the falsity of the alleged replacement of the Treaty of Sèvres by the Treaty of Lausanne and present in detail the real content of the Sèvres-Lausanne passing. It is emphasized that from the point of view of international law, the Armenian rights were not only annulled by the Treaty of Lausanne, but in fact they were reaffirmed by Article 16 of the Treaty. At the same time, the Treaty of Lausanne did not recognize Turkish sovereignty over the territories allotted to Armenia by W. Wilson's Arbitral Award. The legitimacy of W. Wilson's Arbitral Award and the fact that it is legally timeless and inalienable are substantiated by an examination of declassified US archival documents.

"The Treaty of Sèvres and the Arbitral Award of US President W. Wilson: A critical look from a 100-year distance" collective work, despite the large number of its authors, has a rather solid structure, fresh and rich speech about "old" general issues, and quite realistic conclusions.

Резюме

## ЦЕННОЕ ИССЛЕДОВАНИЕ

О Севрском договоре и Арбитражном решении президента США  
Вудро Вильсона

Сурен Т. Саркисян

*Доктор ист. наук*

**Ключевые слова** - Армянский вопрос, Севрский договор, Арбитражное решение В. Вильсона, Западная Армения, единая Армения, Парижская мирная конференция, Советская Россия.

В конце 2020 г. для читателей, интересующихся историей Армянского вопроса и Геноцида армян вышла в свет коллективная монография «Севрский договор и Арбитражное решение президента США Вудро Вильсона: аналитический взгляд на события 100-летней давности», авторами которой являются историки разных научных и образовательных учреждений Республики Армения.

Авторы с дистанции 100-летней давности комплексно рассмотрели и проанализировали имеющие для Армении и всего армянства важное значение Севрский договор и Арбитражное решение президента США В. Вильсона, путем освещения как их предыстории и истории, так и приложенных в течение 100 лет усилий для претворения этих документов в жизнь. Более того, руководствуясь лучшими традициями критической истории, они представили новый взгляд на события 100-летней давности с целью раскрытия глубинных связей между прошлым и настоящим.

Обращаясь к политическому содержанию Севрского договора, можно заметить, что принятием этого документа завершился длинный ряд договоров между державами победителями и побежденными в Первой мировой войне. Авторы монографии подчеркивают, что, по статьям 89-93 Севрского договора восстанавливаются не имеющие сроки давности права армянского народа на Западную Армению. Отмечается, что не менее важно было признание де-юре Республики Армения не только со стороны союзников-победителей, но и проигравшей Османской империи. В юридическом плане этим фиксировалось, что Республика Армения – это единая Армения, соединяющая Западную и Восточную Армению.

Авторы аргументированно отрицают известный подлог о якобы подмене Севрского договора решениями Лозаннской конференции и подробно представляют реальное содержание перехода от Севрского к Лозаннским соглашениям. Подчеркивается, что по Лозаннскому договору, права армян не только не были аннулированы, а фактически вновь подтверждены, согласно 16-ой статье. В тоже время, Лозаннский договор не признал турецкий суверенитет на территорию Армении. Легитимность Арбитражного решения В. Вильсона с правовой точки зрения неувязима и не имеет срока давности.

Коллективная монография «Севрский договор и Арбитражное решение президента США В. Вильсона: аналитический взгляд на события 100-летней давности», несмотря на многочисленный состав авторов, в структурном плане целостна, представляет «старые» проблемы с нового ракурса, с вполне аргументированными выводами.

## REFERENCES

- SEVRI PAYMANAGIRN U AMN NAKHAGAH V. VILSONI IRAVARAR VCHIRĔ. k'nnakan hayats'k' 100-amyā heravorut'yunits', hegh. **Maruk'yan A. Ts'.**, **Poghosyan S. A.**, **Hakobyan A. M.** ev urishner, khmb. **Khudinyan G. S.**, Yer., "Lusakn" hrat., 2020, 252 ėj (In Armenian).